# ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ՔԱՌԱՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐԸ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ՇՄԱՎՈՆ Ա Ռ Ո Ւ Շ Ա Ն Յ Ա Ն Ի Ն

Ե Ր Ե Վ Ա Ն

Ընդունեցեք, մեծահարգ Նախագահ, Մեր անկեղծ շնորհավորանքները Հոկտեմբերյան Մեծ հեղափոխության 45-րդ տարեդարձի առթիվ։ Թո՛ղ անսասան մնա խաղաղության հզոր պատվար Սովետական Միությունը ու նրա դրոշի տակ աճի ու բարգավաճի մեր Մայր երկիրը խաղաղ ու ապահով։ Ձեզ երկար կյանք քաջառողջությամբ։

Վ Ա Զ Գ Ե Ն Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Է Ջ Մ Ի Ա Ծ Ի Ն

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ԱՆՏՈՆ Ք Ո Չ Ի Ն Յ Ա Ն Ի Ն

Ե Ր Ե Վ Ա Ն

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխության 45-րդ տարեդարձի առթիվ հղում ենք Ձեզ և Սովետական Հայաստանի բարեխնամ կառավարության բոլոր անդամներին Մեր ջերմագին շնորհավորանքները և ամենաանկեղծ բարեմաղթությունները։

Սովետական Միության ժողովուրդների խաղաղ ու երջանիկ ընտանիքում թող հավետ ապրի ու ծաղկի մեր վերածնված Մայր Հայրենիքը հարատև վերելքի ու բարօրության մեջ: Մաղթում ենք Ձեզ և Ձեր գործակիցներին լիակատար հաջողություն Ձեր հայրենաշեն աշխատանքներում:

Վ Ա Զ Գ Ե Ն Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Է Ջ Մ Ի Ա Ծ Ի Ն

## ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Պ Ո Ւ Զ Ի Ն Ի Ն

Մ Ո Ս Կ Վ Ա

Ընդունեցեք Մեր սրտագին շնորհավորանքները Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխության 45-րդ տարեդարձի առթիվ:

Մաղթում ենք Սովետական Միության ժողովուրդներին նոր հաջողություններ աշխարհի ընդհանուր խաղաղության պայմաններում:

Վ Ա Զ Գ Ե Ն Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Է Ջ Մ Ի Ա Ծ Ի Ն

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ՍԱՐԳԻՍ Գ Ա Ս Պ Ա Ր Յ Ա Ն Ի Ն

Ե Ր Ե Վ Ա Ն

Ջերմապես շնորհավորում ենք Ձեզ Հոկտեմբերյան Մեծ հեղափոխության 45-րդ տարեդարձի առթիվ և մաղթում ենք Ձեզ և խորհրդի անդամներին արևշատություն և հաջողություն Ձեր հայրենանվեր գործունեության:

Վ Ա Զ Գ Ե Ն Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Է Ջ Մ Ի Ա Ծ Ի Ն

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Ընդունեցեք, խնդրում եմ, Հայաստանի Գերագույն Սովետի Նախագահության և իմ շնորհակալությունը այն շնորհավորանքի համար, որ Դուք հղել եք մեզ Հոկտեմբերյան Սոցիալիստական ռևոլյուցիայի 45-րդ տարեդարձի առթիվ:

Շ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ
Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի
Նախագահության Նախագահ

ԵՐԵՎԱՆ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Սովետական Հայաստանի կառավարության և անձամբ իմ անունից շնորհակալություն եմ հայտնում Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 45-րդ տարեդարձի առթիվ հղած Ձեր շնորհավորանքների և բարեմաղթությունների համար:

Ա. ՔՈՉԻՆՅԱՆ
Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի Նախագահ

ԵՐԵՎԱՆ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Հաճեցեք ընդունել խորհրդի անդամների և իմ շնորհակալությունը Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 45-րդ տարեդարձի առթիվ հղած Ձեր շնորհավորանքների համար:

Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր
Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ

ԵՐԵՎԱՆ